**Արձանագրություն N 3**

**<<ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-18/14>> ծածկագրով էլեկտրական սարքերի, սարքավորումների վերանորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան 31.07.2018թ
ժամը 14:30

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Հ. Բաղինյան |
| Հանձնաժողովի անդամներ ՝ | Տ. Ղուկասյան |
| | Ս. Զաքոյան |
| | Գ. Խաչատրյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Տ. Վասիլյան |
| Բացակայում էր հանձնաժողովի անդամ՝ | Շ. Իսախանյան |

**1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման պատասխանի մասին**

---

(Հ. Բաղինյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հարցում էր ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ: Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն համաձայն որի՝ մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:*

**2. Գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին**

---

(Հ. Բաղինյան)

2.1 Հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետը գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները և ընտրված մասնակից ճանաչել <<Մագիստրալ նախագիծ>> ՍՊԸ-ին

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:*

**3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին**

---

(Հ. Բաղինյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել սույն արձանագրության 2.1 կետում նշված մասնակցին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:*

**4. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

---

(Հ. Բաղինյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրվան հաջորդող աշխատանքային օրը ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Հ. Բաղինյան

Անդամ՝ ---------- Տ. Ղուկասյան

---------- Ս. Զաքոյան

---------- Գ. Խաչատրյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Տ. Վասիլյան